

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի շնորհավորանքի խոսքը մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտներին 26.05.2017

Մի րեւի շրջանավարտներ

Ձեզանից յուրաքանչյուրը հիմա հարազատ դպրոցից բաժանվում է թե՛ խորին հուզմունքով, թե՛ անմոռանալի տպավորություններով՝ տանելով իր ստացած կրթության ու դաստիարակության լույսը դեպի կյանքի նոր հանգրվաններ, դեպի նոր բարձունքների նվաճում հետագա ուսման մեջ կամ աշխատանքում: Ուզում եմ լիահույս լինել, որ մեր մանկավարժները ձեր հոգիներում սերմանել են սեր դեպի հայրենիքը, ուսումը, ներարկել համազգային ու համամարդկային արժեքները, ամենայն բարեխղճությամբ նախապատրաստել Հայաստանի Հանրապետության արժանի քաղաքացիներին:

Դուք եք Հայոց հայրենիքի վաղվա կերտողը, նրա պաշտպանն ու շինարարը, բժիշկն ու մանկավարժը, նվիրական ծնողն ու սնողը:

Կանաչ ճանապարհ եմ մաղթում բոլորիդ ձեր կյանքի այս պատասխանատու ճամփաբաժանում, ցանկանում անսպառ հաջողություններ հետագա նպատակներում, ամենայն սեր ու բարիք, միշտ երջանիկ ու խաղաղ տարիներ:

Գեղարքունիքի մարզպետ՝ Կարեն Բոթոյան